զի ճապայ, եւ ով որ թէսքէրէ առնելու կ'երթար
նէ Պատրիարքարանը իւր ֆամիլիային անուները
յատուկ յատուկ կը գրէին եւ կը հարցնէին մա-
րապետ կա՞յ մի, տարեք մեծ աղջիկ ըլլար նէ
կ'ըսէին աշխարհ մտնայի պիտ'որ. կ'ուզէին հաս-
կնալ թէ մարապետոյ՝ է մի. աս բանս սօնդա
հասկցուեցաւ. այս ձեռով թէսքէրէ կու տային:

Այս միջոցին Հայք գրեթէ միշտ իրենք իրենց
Պատրիարքարանը խորհուրդ կ'ընէին, տէրութեան
խորհուրդի պէս միշտ սատանութիւն կը մտա-
ծէին:

Յանկարծ տէրութեան քեահեա պէյը որ ա-
նունը իւլիւսի Ահմէտ էֆ. էր, փոխուեցաւ, քիչ
միջոց անցաւ, էվլէր նազրի ըրաւ տէրութիւնը աս
մարդս, յետոյ Թագաւորական հրամանաւ սկսան
Պէյ Օղլուի, Հալաթիայի, Պօղազ իշիկի եղած կա-
թօլիկի տուները մէզաթի քաշել եւ մէկ դիէն ծախ-
ուիլ, հարուրին քսան տալով, ըսել է հարուրին
սէքսէն պակաս գին տալով. ծախուիլ ու սպակ տալ.
առած ստակէդ ալ հարուրին երկու եւն. թէլլալիյէ
կ'առնէին. Պատրիարքին կողմանէն երկու տէրտէր
նազըրին խօսախը նստեցան, ամէն տանց թէֆտէրը
ասոնց քով էր կը նայէին որ եաղնշուսթիւն չըլլայ.
եւ ստակ առնողէն ասոնք ալ պախշիշ կ'առնէին
եւ մէյ մէկ քիչ ալ նազրին էթվալէններուն կու
տային, կրնամ ըսել հարուրէն երկու ալ ասանկ
կ'երթար եւ միշտ բերանին աս խօսքն էր՝ Թա-
գաւորական հրաման է. կրնամ ըսել Թագաւորը
ամէն բանը չիյտէ, բայց ինչ շահ:

Հայք շատ կաթօլիկի կ'ըսէին, գացէք Պատ-
րիարքին հնազանդ եղիք խոստովանեցէք տուներ-
նիդ կ'ազատենք, շատ մարդ այս միտքով գնաց
Հայոց կողմը, բայց կարող չեղան ազատելու. քա-
նի մը մարդոց տուներ ազատեցաւ, Պէզեհան Թա-
րուսթիւն միւսթալիխ ըլլալով, եւ ասոնք ալ ինչպէս
պէտք էր նէ Հայոց կողմը անցան:

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐԲԷՆ

ԳԻՐԻ Ա. — ԳԼ. Ի.Բ. — Մարգկային բժառանգութիւնը
խոհրդածելու վրայ (Շար.)

Շատ անմիտներ ու սկսումներ կ'ըսեն. Տե՛ս, որքան քաղցկեցիկ է սա մարդը, ո՛րչափ հարուստ, ո՛րչափ մեծ, ո՛րչափ կարող ու փառաւորեալ:

Սակայն դարձն'ը աշխարհի երկնաւոր քաղցկեցիկ, ու պիտի տեսնես որ այս ամեն ժամանակաւորներն ոչինչ, եւ նաեւ կարի անսոյց են եւ ցարկայի. որովհետեւ զանոնք սոսցողն ազատ չէ երբեք հոգի ու վախ:

Մարդու երանկութիւնը չէ՝ առաջապես ունեւնայ ժամանակաւոր քաները, այլ յափառութիւնը կը բաւէ իրեն:

Սուգիւ թշուառութիւն է սարկը երկրի վրայ:

Ո՛րչափ առաւել մարդն ուզէ հոգեւոր ըլլալ, այնչափ ներկայ կեանքն աւելի կը դառնանայ իրեն, որովհետեւ շատ եւս կը գնայ եւ պայծառագոյն եւս կը տեսնէ մարդկային ապականութեան քրտնախնկները:

Վասն զի՝ ունեց, իմեց, հսկեց, իմանայ, հանգիստ, աշխատի եւ բնութեան ուրիշ պիտոյից ենթակուելի, յիշաւի մեծ թշուառութիւն է եւ օտաւապանք՝ ջերմեւունք մարդու, որ յօժարակամ կը փափաքէ գերել եւ ազատ ըլլալ անկէ մեղի:

Օ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՌՈՂԱՅԻ

Իգնատիոս Բարիկ հասաւ 4328ին, փետրուարի սկիզբները, եւ ընկերեցաւ Մոնթէկիւի դպրոցին մէջ ուր քիչ մը ատեն նորէն զբաղեցաւ նախնական ուսման քննարկով եւ ապա գնաց Սէնթ-Պարայ դպրոցը իմաստասիրութիւն սորվելու համար: Այս միջոցին աղքատութենէ շատ տառապեցաւ եւ ստիպուեցաւ մերթմուտայ, մերթ Սէն-Ժաք անկեղանոցին մէջ աղքատներուն հետ կերակուր ուտել, մերթ Ֆրանսա եւ Անգլիա երթալ այն տեղերը գտնուող Սպանիացի վաճառականներէն ոգործութիւն առնելու համար: Բայց շատ աւելի ներգութիւն կրեց այլ եւ այլ հալածանքներէ որ իրեն դէմ յարուցուեցան՝ դարձի բերած շատ մը երիտասարդներու համար: Սակայն աստուածային նախախնամութիւնը՝ փառաւոր կերպով ազատեց նոյն ամենէն իգնատիոսը, որ մեծ յաջողութեամբ ստացաւ իմաստասիրութեան վկայականը: Ետեւ աստուածաբանութիւն սորվեցաւ Սուրբ-Թովմասի դպրոցին մէջ, եւ հոն ստացաւ այն լայնորէ զորոնք ապա սփռեց իր իմաստալից եւ կորովալիք քաղցրութեան եւ յորգորակներուն մէջ:

Տակաւ առ տակաւ կը հասնէր այն ժամանակը ուր Աստուած որչա՛տ էր տալ իր՝ Եկեղեցւոյն, Իգնատիոսի միջոցաւ, Յիսուսեան Ընկերութիւնը: Ուստի նախ եւ առաջ վեց ընտիր երիտասարդներու փափաք ազդեց իգնատիոսի միանալու՝ ընկերով փրկութեան համար անգագար աշխատելու համար: Այս խումբին առաջինը եղաւ Բիէն Լըֆէվըր՝ Սաւոյայի Վիլարէ գիւղէն, երկրորդը՝ ազնուատոհմ Ֆրանսուա-Քասալէ՝ Նաւարրայի Թագաւորութիւնէն, երրորդը՝ Ժաք Լայնէց, չորրորդը՝ Ալֆոնս Սալմըրան, հինգերորդը՝ Նիքոլայ Ալֆոնս, վեցերորդը՝ Սիմոն Ռոսարիկուէց: Ասանք, ամենքն ալ, շատ երեւելի եղան յետոյ իրենց վարդապետութեամբ, սրբութեամբ եւ եկեղեցւոյ ժառանգած մեծ ծառայութիւններով: 4334ին, Ս. Կոլմին Վերափոխման օրը եօթը միասին հաւաքուեցան Ս. Բենեդիկտոսի կարգին Մոնմարգաի վանքին եկեղեցւոյն մէջ, Բարիկի մօտ, ուր խոստովանելէ աւ հաղորդուելէ յետոյ, բարձր ձայնով ուխտեցին իրենց որչա՛տ ատենին ուղեւորութիւն մը ընել դէպի Երուսաղէմ՝ Արեւելքի անհաւաններուն գարձին համար, թողալ ինչ որ ունին, բացի նաւարկութեան համար կարեւոր եղածէն. եւ, եթէ այս ուղեւորութիւնը կարելի չըլլայ կտաւրել կամ իրենց Արեւելք Գնալու Թոյլտուութիւն չըլլայ, երթալ Յիսուսի փոխանորդին ոտքը ինչպէ՛ս, որպէսզի՝ Ն. Սրբութիւնը՝ Եկեղեցւոյ ծառայութեան եւ հոգիներու փրկութեան համար պատշաճ տրամագրէ իրենց մասին:

Այս ատենէն սկսեալ իգնատիոս ամէն կերպով ջանացաւ պահելու իր ընկերներուն եռանդը եւ փոխադարձ միութիւնը, մինչեւ աստուածաբանութեան ընթացքին աւարտումը եւ սուրբ երկերը անցնելու համար Վենետիկ երթալու ատենին ժամանումը: Օր էր 4337 Յունուար 28, Աշխատեցաւ նաեւ Բարիկի հաւատացեալները գործնելու ընդդէմ՝ Լուծելի եւ Զուրկի հերետիկոսութիւններուն զորոնք մի քանի դերմանացիներ ամէն կողմ կը սարսփեցնէին քաղաքաբար:

Իտալիա մեկնելէն առաջ ստիպուեցաւ Սպանիա երթալ թէ՛ նոր ճգնութիւններով խաթարած առողջութիւնը գարմանելու եւ թէ՛ կարգադրելու համար անական գործերը իր երեք սպանիացի ընկերներուն որոնք իրենց կոչումը կորսնցնելու վտանգին մէջ պիտի իյնային եթէ երթային անձամբ կարգադրելու նոյն գործերը: Երբ Լոյսլայ դղեակին մօտեցաւ մօտակայ Ազրէգիա քաղաքին բոլոր կղերը թափորով անոր առջեւ ելաւ: Կրցածին շափ խոյս տուաւ այսպիսի պատուէ մը, եւ Մատըլէի անկեղանոցը քաղաքացաւ: Իր եղբայրը եւ եղբորդիները քիչը եկան եւ թախանձանք ազաւջեցին որ դղեակը երթայ ըսելով թէ՛ Բու տունդ է, գաւն անոր տէրը պիտի ըլլաս: Բայց ինք յանձն չառաւ եւ ազաւջեց որ զինքը աղքատներուն հետ թողուն: Աջանչելի մահի՛ք մը բերին իրեն, եւ եղբայրը ամէն օր աղնիւ կերակուրներ կը

դրկեր իրեն, բայց ինք այն կերակուրները աղքատ հիւանդներուն կու տար, և ինք գռնէ գուռ մուրալով առած ցամաք հացը միայն կ'ուտէր. և մերկ գետնին վրայ կը պառկէր: Լոյսը այն մօտ երեք ամիս քնակեցաւ և միանգամ միայն հոն գնաց, ան ալ եղբորը կնոջ արտաքոյ կարգի թախանձանքին վրայ: Քրիստոնէական վարդապետութիւն կը սորվեցնէր աղքատներու և աղաներու, ամէն առասկա տնէն համար կը քարոզէր. իրեն միտ կը դնէին այնքան հաճութեամբ. որ քարոզի եկողներուն համար եկեղեցիները փոքր գալով բաց դաշտի մէջ քարոզելու կը ստիպուէր: Կարելի չէ բացատրել իր քարոզներով ըրած օգուտները: Կիններու զեղխութեանց դէմ քարոզելէն անմիջապէս վերջը անհետ եղան՝ բազմաթիւ զգեստները և ոչ-պարկեշտ զարդերը, խաղի դէմ խօսած օրը, բոլոր խաղամոլները իրենց թուղթերն ու քուէները գետը նետեցին և ամբողջ երեք տարի այլ ևս ձեռք չառին: Իր ստացուած քովը շատ շահեկան հաստատութիւններ ալ ըրաւ, ուրիշներէ զատ՝ պարտագրեց իր ժառանգները որ, ամէն կիրակի, Ազգեգիտայի մէծ եկեղեցւոյն մէջ տասուերկու հաց բաժնեկն առաներկու աղքատներու, տասուերկու առաքեալներու և պատուին համար: Ամէն աղքատներու օգնելու համար բարեգործական ընկերութիւն մը հիմնեց Սուրբ Խորհուրդ տնտեսով: Հաստատեց կամ նորոգեց Հրեշտի Ցեառնը աղօթելու սովորութիւնը, կէս օրին՝ մեղաւորներուն համար, իսկ երեկոյն մեղաւորներուն համար: Վերջապէս իր հայրենիքին մէջ անցուցած երեք ամսուան միջոցին այնքան բարեք ըրաւ զոր քարոզիչ մը երեք տարուան մէջ պիտի չկրնար ընել, իր տնտեսը այնքան մեծցաւ որ ամէնքը կը փութային գալ զինքը տեսնել եւ իր զգեստին հօդի: Այն տեղ մի քանի հրաշքներ գործեց, իսկ ինչպէս կ'օրոգիւսէր զիւսհար մը բժշկեց եւ բազմամեայ հիւանդի մը առողջութիւն առաւ:

Գ Ի Տ Ա Վ Ա Ն

ՉԳՍԽԵԺԷ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՍՏՆԵՐ.— Վիրաբուժութիւնը հիւսուածներու կամ գործարաններու պակասները լրացնելու համար՝ անոնց վրայ կամ կենդանի հիւսուածք մը (կոճիկ, ոսկր, ճարպ, ձգան) կը պատուաստէ կամ մետաղէ կամ ուրիշ նիւթէ անգործարանաւոր մարմին մը կը զետեղէ:

Աս երկրորդ եղանակը կ'ըսուի փոխանակութիւն:

Եթէ փոխանակութիւնը ներքին է, այսինքն եթէ անգործարանաւոր մարմինը հիւսուածքներու ներքին մասերուն մէջ մուծուի, հարկ է որ բոլորովին զերծ ըլլայ մանրէա-

կան սերմերէ. որովհետեւ երբ մանրէական նիւթութիւն տեղի ունենայ և շարաւ գոյանայ, օտար մարմինը՝ անպատճառ կամաց կամաց կ'արտաքսուի: Շատ օգտակար է նաեւ որ օտար մարմինը օժտուած ըլլայ ինչ ինչ բնագիտական, մեքենական և տարրալուծական յատկութիւններով: Փոխանակութեան համար գործածուած մետաղներէն արծաթը, լոնոսկին, ոսկին, կնապաղեղը և պղինձը աղէկ արդիւնքներ յառաջ կը բերեն. ամենէն աւելի յանձնարարելի է արծաթը, որուն մակերեւոյթին շատ լաւ կը փարի յարակցական հիւսուածքը:

Միւս գործարանաւոր նիւթերուն մէջ կենդանի հիւսուածքներու ամենէն աւելի յարմար կուգան խուճայարը և ձգախէժը: Որովհետեւ արիւնը գործարանաւոր մարմիններու ամենէն գիւրայլայլ նիւթերէն մին է, և երակներու և շնչերակներու ներքնամակերէն զատ գրեթէ ինչ բանի որ հպի մէկէն կը թանձրանայ. սակայն երկու նիւթ կայ որոնց հետ երբ շփման մէջ մտնէ յետին աստիճանի դանդաղ կերպով կը թանձրանայ. աս նիւթերն են խուճայարը և ձգախէժի թաղանթները: Խուճայարին այս հանգամանքը, ինչպէս յայտնի է, իր անուանէն (խուճար, paraffine=parum affinis), յառաջ կուգայ իր տարրալուծական անգործութենէն, ուրիշ մարմիններու հետ սակաւ յարակցութենէն: Իսկ ձգախէժը իր այս յատկութիւնը կը պարտի անտարակոյս իր սոսրնձակերպ բնութեան, որով կենդանի գործարանները կազմող սոսնձակերպներուն հետ տարրաբանօրէն կը միանայ:

1909ին Սիւլլիվան ամերիկացի բժիշկը փորձեց չափ մը աղեծոցին և լերդական անցքին միջև ընդհատուած մաղձային անօթիներուն տեղ ձգախէժէ խողովակ մի դնել. և այնուհետեւ Ուիլմս և Պրէօլէր մարդուն մաղձային անցքերը դարմանելու համար այս միջոցը գործածեցին և, կ'երեւի թէ, յաջողութեամբ. բայց ուրիշ արհեստագէտներ ընաւ չեն յաջողած, ասոր պատճառը ներմուծուած օտար մարմինն մանրէական նիւթութեան զերծ չըլլալն է, որով անշուշտ կ'անշատուի նա և դուրս կը ձգուի:

1910ին Թիւֆֆիէ և Գարբէլ շան մը պորտային մայրերակին կողէն 2×1 հարիւրորդամէդր մաս կտրելով տեղը դրին նուրբ շերտ մը ձգախէժիկ խնամքով կարեցին, կցեցին զայն . տասնուհինգ ամիս վերջը կարելի եղաւ ստուգել որ այս մայրերակի կարկտանը պէտք եղածին պէս բռնած էր . և կենդանի հիւսուածքը վերակազմուած էր ձգախէժի շերտին երկու կողմերուն վրայ :

Անցած մարտ ամսուն Տէլպէ բժիշկը՝ բժշկական Ակադեմիային առջև տեղեկութիւն առաւ իր ըրած երկու ձգախէժէ պատուաստներուն վրայ . Անգամ մը տարածիչ ձգտան մը մատնոսկրի մը կպած էր . Տոքթոր Տէլպէ ձգախէժէ նուրբ թերթ մը գետեղեց ոսկրին ու և ձգտանին միջև . ձգտանը սկսաւ գործել և այն ատենէն ի վեր անխափան կը գործէ : Ուրիշ անգամ մը ձգախէժի թանձր թերթով մը նորոգեց աղէթափի մը աւրուած կողը :

Վերջերս Դոստոս թերթը նշանակած էր՝ փոխանակութեան համար ձգախէժի ուրիշ մէկ ձեւով գործածութիւնը . այս է Իտալացի Ֆիէսքի վիրաբոյժին հնարած նոր միսը : Ֆիէսքի այս ձգախէժի սպունգ կոչուած ծակոտիկէն ձգախէժը հիւսուածքներու կցելով՝ հաշուի առած էր երկու տարրերուն միջև գտնուող «համակրութիւնը», որով կենդանի տարրը անկենդան տարրին ծակտիքներուն մէջ թափանցելով կրնայ նոր հիւսուածք մը կազմել : Մահճաբուժական փորձերը և ձեռք բերուած արդիւնքները հաստատեցին այս գաղափարին ճշգրտութիւնը : Երբ ամփոցուած ձգախէժէ սպունգի կտորներ, փորամաշկային խոռոչին մէջ մուծուին կամ շուններու և ճագարներու մկանքին մէջ զետեղուին, կը պատուին և կը թափանցուին «հատաւոր հիւսուածք»ով մը՝ առանց վնասակար հակազդեցութիւն մը յառաջ բերելու : Երկու ցայլական աղեթափութեան գործողութեանց մէջ այս ձգախէժէն կազմուած պարզ խցսնով մը յաջողութեամբ գոցուեցաւ բացուածքը : Տարի մը անցած է, և դեռ երկու հիւսանդներն ալ լաւ վիճակի մէջ են . և երկու խցանները բնաւ տեղերնին չեն փոխած :

ԿԵԱՆՔ ԱՌԱՆՑ ՄԱՆՐԷԻ . — Վնասակար մանրէներ կան, ինչպէս ժանտախտի, հնդախտի, թոքախտի մանրէները և այլն . և Բաւթէօրի գիւտերէն ի վեր հետզհետէ կ'երկարի ասոնց ցուցակը : Բայց լաւ մանրէներ ալ կան . օգուտ չենք քաղեր միթէ այն մանրէներէն որ գինիի և գարեջուրի ոգին կը կազմեն և հացը կը խմորեն, որ տեսակ տեսակ պանիրներու զանգուածը կը հասցնեն և այլն :

Դիտունները նկատելով որ շատ կենդանիներ իրենց աղիքներուն մէջ կը կրեն մանրէտէտկան բազմատեսակ բուսականութիւն մը, բնականաբար տարուեցան սա հարցման . Այս մանրէական բուսականութիւնը օգտակար է, անհրաժեշտ կարեւոր է կենդանիներու : Եւ փորձի գիմելով, ջանացին զանազան կենդանիներ մեծցնել առանց միքրոպի, այսինքն անոնց տալով բոլորովին հականերսուած, ամլացուած կերակուրներ : Այսպիսի փորձերու գործադրութեան զժուարութիւնը լաւ կը հասկցուի՝ երբ նկատի առնուի որ մանրէները անհամար բազմութեամբ կը վխտան ջրին, օդին և գործարանաւորներէ թերու մէջ :

Հիմայ հաստատուած է թէ հնար է որ իրարմէ բոլորովին տարբեր խումբերու պատկանող և ի բնէ աղիքներուն մէջ մանրէական ճոխ բուսականութիւն ունեցող կենդանիներ (ճանճ, չերեփիկ, վառեակ) ապրին կատարելապէս ապանեխական պայմաններու մէջ առանց ուէ անպատեհութեան :

Ստնաւորներու գալով, Նիւթալ և Թիէրֆէլտէր ցոյց տուին որ փոքրիկ կորան (կըրծող ստնաւոր մը) առանց մանրէի կրնայ ապրիլ և գէրնալ . զժբախտաբար, իրենց փորձերուն տեւողութեան կարճութիւնը (13 օր) յառաջ եկած արդիւնքները կասկածելի կը թողու :

Բայց Միշէլ Դոհէնտի և Էօփէն Վօլման յաջողեցան առանց մանրէի սնուցանել չորս կորայ՝ 16, 18, 20 և մէկը մինչև 29 օր : Այս փորձերը միանալով այն արդիւնքներուն որ Մ. Քիւթէն ձեռք բերաւ հականերսօրէն բուծանելով երկու ուլ (մին՝ 12 օր, միւսը 35 օր) կը լրացնեն կենդանիներու հականեք

խական կեանքին մասին ձեռք բերուած ծա-
նօթութիւնները, և կը հաւաստեն որ սահա-
ւորներն ալ կրնան օգտուիլ իրենց սնունդ-
ներէն և զարգանալ՝ առանց մանրէներու մի-
ջամտութեան:

ԳՆԵՐԱԳՈՅՆ ՍՓՈՓԱՆՔՍ

Հորիզոնի վրայ երբ կառչին ամպեր հոծ
խորակելով հոգոյս տենչին ծրագիր,
Եւ երգն անոր մերք դաբն, մերք նողմակոծ
Անհետանայ անուրջներով յուսալիք,

— Խօսէ՛ ինձի, Աստուած, լո՛յս յար փողփողուն.
Եւ ցրնորի տեղ խաբուսիկ բսուերոս,
Միտքս լեցուի սուրբ խոհերով միտք բեղուն,
Բեռնաւորին պրօղով ձեռքերս վեհերոս:

Երբ վարանքի ցուրտ քամիներ զիս փաթթեն,
Բարոյն մէջ մնամ անխաբան, մեղկ, ուժաքափ,
Զրկարեմամ ես խուսափիլ թակարդէն,
Որ կը լարուի հոգիներու անբարափ,

— Փայլէ՛ մրտնոյ, նրժմարտութեան շառաւիղ,
Ցրուէ՛ հովերն այն ժանսաբոյր, մանաւանդ,
Բա՛ց նամբուս վրայ ալիս մը լոյս, ինձ շաւիղ,
Որմէ քայլմ հաստատ, ուղիղ, անըրեւնդ:

Անելութիւն երբ դիմակով դրժնայ, վաս
Ջէնքեր յանձնէ ձեռքերու իսկ մրտնոյ,
Հոգոյս հանդէպ՝ դեռ չարութեան անհաւատ,
Եւ ապահար՝ հաշուածներէ զարհուրիմ,

— Խօսէ՛ դարձեալ, ո՛վ բարեփառն անսահման,
Եւ հոգիս նոր թափով մը թո՛ղ աղողակի
Քա՛ջ եւ աքուն պահանջողի մը նրման
Կանգուն յաւէ տիտ իր պարտքին մրտնոյ:

Երբ քիւր ցաւեր վրաս խուծեն սրբավար,
Երակներէս քամեն կեանքի հիւք եւ հոյզ,
Եւ գիտենք անգուն, ցեղեկն ալ խաւար
Հալիմ անոնց ամպրոպներէն հողմայոյզ,

— Խօսէ՛ նորէն, հոգիս կամփիղ ողջակեզ,
Հրու, լրութի, Աշիղ ներքեւ խոնարհի
Ձերդ խուցիկի բոյր իր բուրվառէն սլանայ քեզ,
Անվիտք բողով պատանքն ու թով աշխարհի:

Երբ տեսնեմ շուրջս արեւներն իմ մարած,
Յոյր որոնց հեռուն կամ մօտ միտք տխուր
Մուր շողերով սրբիս խորեր փարած,
Նրսեմացնեն իմ կեանքիս ալ գոյնը հուր,

— Յո՛յց ռուր ինձի շրթներէն անբարեկամ
Վերելքին ծայրն ուր կը մրդուիմ ես հեւտոս,
Եւ չրհասած լուսոյ ծովուն ան ափանց,
Շիք մը լոյսեղ կաթէ՛ սրբիս վրայ վերտոս:

• • • • •

Եւ այն ատեն եւ ալ դառնամ լոյս համակ
Սլափի մը պէս արձակուած իր աղեղէն
Թո՛հ եւ բոհր խորակելով շարունակ
Կը մրկորնիմ Անհունիդ մէջ լուսեղէն:

Ք. Ե.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵՆ ԱՇԽԱՐՀ. — Իտալիոյ
քրիստոնէական Սէնսիֆալիսմին և կղերին մասին հե-
տեւեալ վճռագիրը տրուած է Կարդինալաց Ժողո-
վին կողմէ.

«Իտալիոյ շատ թեմերէն եւ յատկապէս հիւ-
սիան, այս Առաքելական Աթոռին՝ մեծ գանգատ-
ներ հասան նկատմամբ այն ֆրանսերուն զորոնք բան-
ւորներու և գիւղացիներու դատարարին կը հասցնէ
այն հաստատութիւնը կամ ընկերութիւնը որ Սէն-
սիֆալիսմ կը կառուի, որովհետեւ, մնացած բաներուն
վրայ չիօտելով, իրօք ընկերական պայքարի մը կը փոխ-
աւիտին: Այս պատճառաւ, և այսքան մեծ շարիքի
մը առջեւ առնելու համար, Ն. Ս. Պիոս Ժ. Քա-
հանայապետը այս Ս. Ժողովին հրամայեց զեկուցանել
Իտալիոյ վերոյիշեալ վիճակաւորներուն որ իր միտքը
և իր հաստատ կամքը այս է որ բաժանանալը, ա-
ռանց անձերու և տեղերու բացառութեան, չկարե-
նան ալ ևս ո՛չ անդամակից լլալ աշտօրնակ ընկե-
րութիւններու, ո՛չ անդամ մնալ եթէ արդէն են, ո՛չ
անոնց մէջ պաշտօն վարել, ո՛չ ճառել կամ բանախո-
սել ինպատու անոնց: Այս ամէն բաներէն հեռու կե-
նալու են բաժանանալը, որպէս զի չլլալ թէ մեղա-
կից համարուին այն շարիքներուն որ յաճախ յառաջ
կու գան այդ հաստատութենէն:

Ս. Հօր հրամանները կատարելու համար այս ո-
րոշումները կը հաղորդեմ այն Վիճակաւորներուն, ո-
րոնց կը վերաբերին, որպէս զի իրենք, պարագաներու
համեմատ, անոնց գործադրութեան հոգ տանին՝ հա-
կաւակ ամէն ներհակ բաներու:

Տրուած Հռոմ, Կարդինալական Ս. Ժողովին դի-
ւանէն, 1914 Յունիս 20ին:

ԿԱՐԴ. ՏԵՂԱԿ
Քարտուղար»

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԵՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Լուր-
տի Ս. Հ. Միջազգային Համաժողովին հոգեւոր ար-
դիւնքներուն մասնակցելու համար. Ս. Քահանայա-
պետին բողոքներէն համեմատ, ինչպէս բողոք աշխար-
հի կաթողիկէ եկեղեցիներուն մէջ, նոյնպէս Առաջ
Թեմի մէջ ալ մասնաւոր քերականութիւններ տեղի
կ'ունենան յուլիս 22էն սկսեալ Վաղը, Կիրակի, Ս.
Աստուածածին Աթոռանիստ եկեղեցոյն մէջ, նոյն
դիտաւորութեամբ առաւօտէն մինչեւ երեկոյ Ս. Հա-

ղորդութիւնը ի բազմոցի պիտի դրուի և երեկոյին՝ ժամերգութենէ յետոյ Ս. Հաղորդութեան վրայ քարոզ պիտի տրուի և ապա Ս. Հաղորդութիւնը թափօրի պիտի հանուի:

Վարդավառի կերակին՝ Ս. Երրորդութիւնը կեղեցւոյն մէջ ժամերգութիւն և ձայնաւոր պատարագ տեղի ունեցան: Երգեցողութիւնները շատ կանոնաւոր և սքանչելի կերպով կատարեցին, առանց ուրիշ օգնութեան, նորակազմ դպրաց դասէն մի քանի երեսասարգներ, ուսուցիչ Մէհտերեան էֆ. ի սովորեցած ձայնագրեալ եղանակներուն համեմատ:

* * * Հետեւեալը կ'ընդունինք ի հրատարակութիւն.

Ներկայիւս կը յայտարարեմ թէ վերջին աղգային ժողովոյ իբր եկեղեցական անդամ ընտրուած և եկած թուղթը անմիջապէս ետ զրկած ըլլալով, և այն ապօրինաւոր ժողովին անդամակցել ի խղճէ և հրամանաւ հոգեւոր իշխանութեան չկարենալով, ներկայիւս կը յայտարարեմ զայս, և ի հաստատութիւն կը ստորագրեմ և կու տամ ի հրատարակութիւն:

22 Յուլիս 1914

ՊՕՂՈՍ ԳԵՐ. ԳԱԶՐԻԿԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Երեսի ժողովը Յուլիս 17ին, ուրբաթ ըլլալուն հակառակ, շարունակեց առեւտրական և երկրագործական նախարարութեան ելմատցոյցին քննութիւնը:

— Երկրագործական նախարարութեան ելմատցոյցին վիճարանութեան պահուն՝ Դամասկոսի երեսփոխան Ալիս պէյ նախատական խօսքեր ըրած ըլլալով՝ Քէլէքի երեսփոխան Թէվֆիք պէյի հասցէին, այս վերջինն երկու վկաներ զրկեց անոր և մենամարտի հրաւիրեց: — Բայց արաբ երեսփոխաններուն միջնորդութեամբ մենամարտը տեղի պիտի չունենայ:

— Երեսի. ժողովը իր Յուլիս 18ի նիստին մէջ քննեց թղթատարական ելմատցոյցը:

Թղթատարական նախարար Ոսկան էֆ. Մարաիկեան թուեց նոյն նախարարութեան մէջ կատարուած բարենորոգումները, եւ բացատրութիւններ տուաւ ելմատցոյցին զանազան բաժիններուն վրայ: Պահանջուած վարկերը կը հասնին 70,710,474 զըշ.ի, որուն գրեթէ կէսը պաշտօնէից թոշակին յատկացած է:

Բաւական վիճարանութենէ յետոյ խնդրուած վարկերն և նշանակուած ծախքերն ընդունուեցան նոյնութեամբ:

— Երեսփոխանական ժողովին Յուլիս 19ի նիստին մէջ Թալէաթ պէյ կարդաց Դահլիճին յայտագիրը՝ որստորագրուած ծափերու մէջ:

Յետոյ քուէ առաջարկուեցաւ:

244 քուէարկուներէն 243ը վստահութեան քուէ տուին Դահլիճին:

Նոյն օրը կարգացուեցաւ Սալահ Ճիմճօզ և Սուտի պէյերու և Ուպէյտուլահ էֆ.ի կողմէ ներկայացուած

գիրքը, որ կ'առաջարկէր դասաստանի ենթակել կազմ Մուխթար Ե. Քեամիլի փառաներու դահլիճները, հետեւեալ պատճառներով.

1.— Պատերազմ հռչակած են այնպիսի պահաւ մը երբ բանակը տակաւին պատրաստ չէր թշնամին հետ ընդհարելու:

2.— Զօրաշարժի որոշումը յապաղեցուցած են:

3.— Պատերազմէն քիչ առաջ արձակած են զօրքին մէկ մասը:

4.— Զօրաբաժնի հրամանը ուշ հաղորդած են նահանգներուն:

5.— Դահլիճն անգործ մնացած է Սերպիոյ զօրաշարժէն մինչև Պուլկար բանակին զօրաշարժը, այսինքն 6 օր:

6.— Պատերազմ հռչակուած է առանց իրատէրի:

7.— Նախարարաց Խորհուրդը զին. գործողութիւններու հետ առնչութիւն ունեցող խնդիրներու միջամտած է:

8.— Նախորդ երեսի, ժողովը ցրուած է:

Սալահ Ճիմճօզ պէյ ընդարձակ բացատրութիւններ տուաւ, որմէ ետք ժողովը որոշեց նկատի առնել ներկայացուած գիրքը և խնդրոյն ուսումնասիրութիւնը յանձնեց Դ. Ճիւղը:

Երեսի. ժողովին Դ. Ճիւղը, որուն նախագահն է Այնթապի երեսփոխան Ալի Ճէնանի պէյ, սկսաւ քննել Ահմէտ Մութար ու Քեամիլի փառաներուն Դահլիճները Բարձրագոյն Ատեանին յանձնելու մասին ներկայացուած առաջարկը: Քննութիւնները փութով առաջ տանելու համար հրաւեր զրկեց նախկին Դահլիճներուն պատկանող հետեւեալ անձնաւորութեանց.

Ղապի Ահմէտ Մութար փաշա, Սալիհ փաշա, Ապտիւլհայիմ էֆ., Նորատունկեան էֆ., երկրագործական նախկին նախարար Մուսթաֆա Ռէշիտ փաշա, կրթական նախկին նախարար Սայիտ պէյ, թղթատարական նախորդ նախարար Սապրի պէյ, Դամասկոսի երեսփոխան և Էվզաֆի նախկին նախարար Մէհմէտ Ֆէվզի փաշա, Տամատ Արիֆ Հիքմէթ փաշա, Հանր. Երեսթեանց նախկին նախարար Զիհա պէյ և կրթական նախկին նախարար Տամատ Շէրիֆ փաշա և Ապտիւլբրահիմ պէյ: Օտար երկիր գամուողներէն և այժմ դեսպանութեան պաշտօն վարողներէն ալ գրաւոր տեղեկութիւն պիտի ուղարկուի Դ. Ճիւղը պիտի փութացնէ աշխատութիւնները որպէս զի Երեսի. ժողովը, նստաշրջանին փակուելէն առաջ ներքին կանոնագրին տրամադրութեանց համաձայն, կարենայ իր որոշումը տալ և կազմել Բարձրագոյն Ատեանի որ նախորդ Դահլիճներուն անդամները պիտի դատէ Խորհրդարանին արձակուողին առեւ: Եթէ Դիւթապէս ժամանակ չմնայ, ներկայ նստաշրջանը մինչև ամսոյս 25 (Հ. Տ.) պիտի երկարի: — Իսկ իշխմ կ'ըսէ թէ քննութիւնները պիտի շարունակուին Նոյ.ի նստաշրջանը սկսելուն:

*. Յուլիս 19ին կարկտախառն փոթորկալայդ տեղատարափ մը տեղի ունեցաւ Պոլսոյ մէջ: Կայծակ ինկաւ մայրաքաղաքին զանազան կողմերը: Գուրու Զէշմէ գըօնոդ 9 անգամէ բաղկացած թուրք ընտանիք մը, պիստակներին մը տակ պատասպարուած ըլլալով կայծակնահար եղաւ: Երկու հոգի անմիջապէս մեռաւ: Մնացածները վերաւոր փոխադրուեցան հիւանդանոցը:

— Սինէմքէօյի մէջ 9 տարեկան տղայ մըն ալ կայծակնահար մեռաւ:

— Կիրակի օրուան փոթորիկը մեծ աւերներ գործեց Պէօյիւք Զէքմէճէի կողմերը: Աւասիկ այդ մասին Չաթալճաշի կառավարիչին կողմէ զրկուած պաշտօնական հեռագիրը:

Սրէկ (կիրակի) կէսօրէն ետքը ժամը 3ին ծովին մէջ գոյացած 3—400 մեղր տրամադիծով ահարկու թաթաւ շարքուն մը անցաւ Պէօյիւք Զէքմէճէին 800 մեղր հեռուն գտնուած կալերէն, զորս բնաջինջ ըրաւ: Կտոր կտոր ըրաւ սայլեր, որ բեռցուած չէին: Կալերը գտնուող անձերէն մաս մը օդն ելան եւ մէկ քանի մէղր հեռուն գետինը նետուեցան: Խոշոր ծառեր եւ ընդարձակ արտերէ ձմերուկներ, սիւխեր եւ եգիպտացորեններ՝ արմատախիլ եղան եւ երկու հարիւր մէղր հեռունները տարուեցան: Ծրկձի կառք մը կտոր կտոր եղաւ եւ կառավարն մեռաւ: Ուղեւորները երկու կին էին որ վերաւոր ուեցան: Բաղմաթիւ անասուններ օդն ելան եւ յետոյ վար ինչալով ոտքերնին կտորեցան: Բարեբախտաբար փոթորիկը գաւառին միայն չպատճառեց: Լեռներու վրայ տասնեւութ հոգի վերաւոր ուեցան եւ երկուք ալ մեռան: Արտերուն եւ կալերու մասը երկու հազար ոսկիի չափ է: Հեռագրական թելերը կտորելով հաղորդակցութիւններն ընդհատուեցան: Չաթալճաշի կառավարիչը կեդրոնի բօլշէկին հետ աղէտին վայրը փութաց:

Փոթորիկը՝ անցած տեղերուն մէջ մէկ թիզի չափ փորեց հողը: Տղու մը հագուստները պատուեցան հովին սաստկութենէն, բայց ինք ապատեցաւ: Ամենէն աւելի փնտռուած են Պէօյիւք Զէքմէճէի լիճին

շրջակաները: Փոթորիկէն ժամ մը առաջ տեսնուեցաւ թէ օձերը գլուխնին վեր վերցուցած էին եւ իրենց պոչերովը կ'աշխատէին հողը ծակել եւ մէջը մտնել: Քառորդ մը առաջ ալ լիճին ջուրերը ցամաք կը խռժէին եւ տար էին: Փոթորիկէն ետքը գետինը ծածկուած էր ձուկի, օձի եւ ուրիշ կենդանիներու դիակներով:

— Բ. Դրան մղկիթին մինարէին վրայ կայծակ իջնելով, քանի մը քար վար ինկաւ: Մէկ երկու ասիս առաջ ալ կայծակ ինկաւ նոյն մինարէին վրայ: Կիրակի օրուան կայծակը վեց ծակ բացաւ մինարէին վրայ եւ յետոյ ձօսը գտնուած ուրիշ շէնք մը մտաւ:

*. Յուան զրահաւորը, որուն մէջ կը գտնուէր Յրանասոյի հանրապետութեան նախագահը, Յուլիս 20ին Բրօնշդաւ ժամանեց, ուղեկցութեամբ ժամ Պառ և Լալուազիէ մարտանաւերուն և Սթիլ ու թուօնալլօն թորփիլանաւերուն:

Զարն Ալեքսանդր զբօսանալով դիմաւորեց Մ. Բուանքառէն: Կանոնական ողջոյններուն փոխանակութիւն ետք, Մ. Բուանքառէ զնաց Ալեքսանդր զբօսանաւը, ուր Զարը սերայի կերպով ողջունեց զայն: Կայս. զբօսանաւը յետոյ ԲէթէրՏօֆ ուղեւորեցաւ: Հոն Զարը քառաձի կառքով պայտատ առաջնորդեց իր հիւրը: Մ. Բուանքառէ ընդունուեցաւ Զարուհիին կողմէ:

Իրիկուան ժամը 7 ու կէսին հանգիսական հացկերոյթ տրուեցաւ պալատին մէջ ի պատիւ Մ. Բուանքառէի: Զարը բարի գալուստ մղթեց նախագահին և բնաւ:

«Երկու ժողովուրդներու փոխադարձ համակրութեամբ երկար ատենէ ի վեր միացած, Յրանաս և Ռուսիա քառորդ դարէ ի վեր սերտիւ կապուած են իրարու, լաւագոյն կերպով հետապնդելու համար միեւնոյն նպատակը, այսինքն իրենց փոխադարձ շահերը փրկել: Հաւասարակշռութիւնն ալ խաղաղութիւնը պահպանելով Եւրոպայի մէջ: Բնաւ տարակոյս չունիմ թէ մեր երկու երկրները, հաւատարիմ իրենց խաղաղութիւնը իսէպոլին, պիտի շարունակեն վայելի իրենց ոյժերով ապահովուած խաղաղութեան մը բարեքնները: Հանրապետութեան նախագահը չորհրդակցութիւն յայտնեց իրեն եղած սերայի բնականութեան համար և բնաւ թէ Յրանաս միշտ իր գաղափարին հետ պիտի աշխատէ խաղաղութեան և քաղաքակրթութեան գործին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	465
Լուրսա տղաւ կիսերէն	468
Հին վաւերաբուրքեր	472
Եօթնեակ Քրիստոսէի	475
Գիսական	476
Գերագոյն սփսիանքս	478
Տեղեկագրական	478

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎ. Ծ. Կ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԵՆ-ԽՄԱՎՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Կ. ԹԵՐԻՊՈՒՄԵԱՆ

Տպարան և Արձագանգ Շարաքաբերքի, Բերս, Պայրամ փողոց քի 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.—Արսաւահ-
ւան՝ տար. ֆր. 10. վեցամս 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՅԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-տարեաներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
նստան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwickau.*

EN TURQUIE: *Constantinople et Smyrne.*

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakouy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paievements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.